ք.Վանաձոր

31.07.2025թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» Վանաձոր համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ հանրային լսումների

2025 թվականի հուլիսի 31-ին, ժամը 11:00-ին Վանաձորի համայնքապետարանի վարչական շենքի ավագանու նիստերի դահլիճում /4-րդ հարկ/, տեղի ունեցավ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» Վանաձոր համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ հանրային լսումները:

Բացման խոսքով հանդես եկավ Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հայկ Վիրաբյանը՝ ներկայացնելով հանրային քննարկումների նպատակը.

«Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ավագանու 07 հունիսի 2016 թվականի թիվ 33-Ն որոշմամբ հաստատված կարգը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ, 37-րդ և 84-րդ հոդվածները և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը՝ որոշվել է.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» Վանաձոր համայնքի ավագանու որոշման նախագիծը ներկայացնել հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների 2025 թվականի հուլիսի 14-ից մինչև հուլիսի 31-ն ընկած ժամանակահատվածում:

2. Վանաձորի համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքում տեղադրել հանրային բաց լսումների հրավերը՝ https://vanadzor.am/hanrayin-qnnarkum-3/, ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում:

3. Հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների օր նշանակել 2025 թվականի հուլիսի 31-ը, ժամը 11:00-ը:

4. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» Վանաձոր համայնքի ավագանու որոշման նախագծի հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների վարման համար համայնքի ղեկավարի ներկայացուցիչ նշանակել Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ՝ Վահե Գրիգորյանին:

Վ.Գրիգորյանը տեղեկացրեց, որ գրավոր առաջարկությունների վերաբերյալ նախապես հայտարարված վերջնաժամկետի ավարտին՝ 2025 թվականի հուլիսի 30-ը, ժամը 12:00-ն քաղաքացիների և իրավաբանական անձանց կողմից առաջարկություններ չեն ներկայացվել: Այնուհետև ներկայացրեց ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը.

2026 - 2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Վանաձոր համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (ՄԺԾԾ) հստակեցնում է եռամյա ժամանակահատվածում համայնքի ծախսային քաղաքականությունը տարեկան կտրվածքով՝ հնարավորություն ընձեռնելով համայնքի համար միջնաժամկետ հատվածում կառավարելու համայնքի ֆինանսական ռեսուրսները և ստեղծելու պատշաճ ծրագրային հիմքեր առաջիկա տարվա համայնքի բյուջեի նախագծի մշակման համար: Վանաձոր համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրումից, ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիայից, նպատակային հատկացումներից (սուբվենցիա) գոյացած եկամուտները հատկացվելու են համայնքի զարգացման հիմնական ուղղությունների իրականացմանը, ապահովելով օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների շրջանակում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից համայնքի համաչափ զարգացմանը, բնակչության կենսական մակարդակի բարելավմանը, շրջակա միջավայրի պահպանմանը, համայնքում հարմարավետ ու բարեկեցիկ միջավայրի ստեղծմանը, համայնքային ենթակառուցվածքների արդիականացմանն ու զարգացմանը, համայնքում տուրիզմի և SS ոլորտի զարգացմանը:

2. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրերի առաջնահերթ ուղղությունները և հաշվի առնելով համայնքի խնդիրները, ՄԺԾԾ նախագծում որպես հիմնական ուղղություններ առանձնացվել են՝

1) Նպաստել համայնքի համաչափ զարգացմանը:

2) Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ ճշգրտելով անշարժ գույքի հարկի բազաները, բարձրացնելով սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը և նպատակային օգտագործելով բյուջետային միջոցները:

3) Բարձրացնել ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների և բնակիչների հետ աշխատանքի արդյունավետությունը:

4) Աշխատել առավել թափանցիկ և հաշվետու:

5) Բարձրացնել մասնակցային բյուջետավորման համակարգի ներդրման աշխատանքների զարգացման մակարդակը:

6) Բարձրացնել բնակչությանը և տնտեսվարող սուբյեկտներին մատուցվող համայնքային ծառայությունների և այլ լրացուցիչ ծառայությունների մակարդակն ու որակը:

7) Իրականացնել կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների համայնքային ենթակառուցվածքների պահպանման, շահագործման, նորոգման, գույքային վերազինման և այլ աշխատանքներ:

8) Կառուցել նոր մանկապարտեզներ:

9) Հիմնանորոգել համայնքային ենթակայության մշակույթի տները, մարզապրոցները, ապահովել նոր գույքով և տեխնիկայով:

10) Կապիտալ ներդրումներ կատարել համայնքի բնակարանային տնտեսության, բազմաբնակարան շենքերի պահպանման և էներգաարդյունավետության, վերելակների և բակային տարածքների հիմնանորոգման գործում:
11) Ապահովել փողոցային լուսավորությունը, հին լուսատուները փոխարինել նոր էներգաարդյունավետ լուսատուներով:
12) Համայնքում իրականացնել շրջակա միջավայրի պահպանություն, կազմակերպել սանիտարական մաքրում և աղբահանություն:
13) Ավելացնել կանաչ տարածքները՝ պուրակներն ու այգիները:
14) Աջակցություն ցուցաբերել և իրականացնել միջոցառումներ համայնքի բնակչության՝ խոցելի խմբերին, բազմազավակ ընտանիքներին, հաշմանդամներին:
15) Իրականացնել ՏԻՄ-ի աշխատակիցների մասնագիտական վերապատրաստում:

ՀԱՄԱՅՆՔԻ 2026 - 2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով եկամուտների կանխատեսումներն իրականացնելիս հաշվի է առնվել ՏԻՄ-ի կողմից, ոլորտը կարգավորող օրենսդրությամբ սահմանված աղբյուրներից համայնքային բյուջե ձևավորելու իրավական հիմքերը, մոտ անցյալում համայնքային բյուջե փաստացի հավաքագրված եկամտային հոսքերը և առկա բազաների տվյալները, նախորդ տարիներին տեղական հարկերի, տուրքերի և վճարների գանձելիության մակարդակը, ինչպես նաև տվյալ բնագավառում առկա խնդիրների առաջացման պատճառները ու դրանք հաղթահարելու հնարավորությունները: Հիմք են հանդիսացել համայնքապետարանի համապատասխան բաժինների կողմից ներկայացված տեղեկությունները ընթացիկ բյուջետային տարվա հաշվարկային եկամուտների և գոյացած ապառքների վերաբերյալ: Առանձին հարկատեսակների գծով կիրառվել են եկամուտների կանխատեսման փորձագիտական և միտումների վերլուծության մեթոդները:

Վարչական բյուջեի սեփական եկամուտների կանխատեսումը ընդգրկում է հարկային եկամուտները (անշարժ գույքի հարկ և փոխադրամիջոցների գույքահարկ), տեղական տուրքերը և ոչ հարկային եկամուտները (տեղական վճարներ):

Անշարժ գույքի հարկը կանխատեսվում է 2026թ. համար՝ 194500.0 հազ. դրամ, 2027թ. համար՝ 200000.0 հազ. դրամ, 2028թ. համար՝ 209000.0 հազ. դրամ:

Փոխադրամիջոցների գույքահարկը կանխատեսվում է 2026թ. համար՝ 1022500.0 հազ. դրամ, 2027թ. համար՝ 1030500.0 հազ. դրամ, 2028թ. համար՝ 1040500.0 հազ. դրամ:

Տեղական տուրքերը կանխատեսվում է 2026թ. համար՝ 96491.0 հազ. դրամ, 2027թ. համար՝ 100155.0 հազ. դրամ, 2028թ. համար՝ 105638.0 հազ. դրամ:

Պետական տուրքերը կանխատեսվում է 2026թ. համար՝ 45000.0 հազ. դրամ, 2027թ. համար՝ 48000.0 հազ. դրամ, 2028թ. համար՝ 55000.0 հազ. դրամ:

Գույքի վարձակալությունից եկամուտները կանխատեսվում է 2026թ. համար՝ 55450.0 հազ. դրամ, 2027թ. համար՝ 56700.0 հազ. դրամ, 2028թ. համար՝ 58400.0 հազ. դրամ:

Վարչական գանձումները (տեղական վճարներ) կանխատեսվում է 2026թ. համար՝ 406380.0 հազ. դրամ, 2027թ. համար՝ 408980.0 հազ. դրամ, 2028թ. համար՝ 411130.0 հազ. դրամ:

Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-ի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտները կանխատեսվում են 2026-2028թթ. համար նախատեսել 2000.0 հազ. դրամ:

Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտները կանխատեսվում են 2026թ. համար՝ 41000.0 հազ. դրամ, 2027թ. համար՝ 45000.0 հազ. դրամ, 2028թ. համար՝ 52000.0 հազ. դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ 2026 - 2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Օրենքով սահմանված կարգով համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծմանն ուղղված սեփական և պատվիրակված լիազորությունների առավել արդյունավետ իրականացման նպատակով համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի ծախսային մասը կազմելու համար հիմք է հանդիսացել համայնքի զարգացման հիմնական դրույթները:

1. Ծրագրի անվանումը՝ «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում»

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 01, խումբ 1, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում համայնքի բնակչությանը որակյալ ծառայությունների մատուցման համար համայնքապետարանի աշխատակազմի պահպանում:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի համար ստեղծել պատշաճ աշխատանքային պայմաններ, օրենքով սահմանված լիազորությունների և պարտավորությունների լիարժեք իրականացման համար:

2026 թվականի համար Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի պահպանման ծախսերը նախատեսվում են 792375.0 հազ. դրամ, 2027 և 2028 թվականների համար՝ 792875.0 հազ. դրամ:

Կառավարման ապարատի պահպանման ծախսերը հաշվարկելիս հաշվի են առնվել նախորդ տարիների ընթացքում կատարված փաստացի ծախսերը, ինչպես նաև կառուցվածքային ստորաբաժանումների կողմից իրենց բաժինների բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումները, ներքին աուդիտի ծառայությունների գնման համար

անհրաժեշտ միջոցները, ավագանու անդամի գործունեության հետ կապված ծախսերի փոխհատուցումը:

Ծառայությունների գծով իրականացվելու են՝

Արտաքին կապեր /քույր քաղաքների փոխադարձ այցելություններ/
Կառավարման տեղեկատվական համակարգի սպասարկում /cmis.vanadzor.am/
vanadzor.am կայք էջի հոսթինգ /10gb/
Etransport.am mapgis.am կայքերի սպասարկում
am- դոմեյն գոտու համար
Earlyone ծրագիր
Համայնքապետարանի քարտրիջների սպասարկում
Համակարգչային տեխնիկայի սպասարկում
Համայնքում տեղադրված տեսանկարահանող սարքերի սպասարկում

Հիմնական միջոցների մասով նախատեսվել են՝
Համայնքապետարանի ներքին ցանցի նախագծում և արդիականացում
Համակարգչային տեխնիկայի ձեռք բերում
Գույքի ձեռք բերում
Ինտերակտիվ բյուջեի ներդնում /կայքի ստեղծում, տվյալների մուտքագրում/

2. Ծրագրի անվանումը՝ **«Աշխատակազմի /կադրերի/ գծով ընդհանուր բնույթի ծառայություններ»**
(Ծրագրի դասիչը՝ Բաժին 01, խումբ 3, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լրազորությունների իրականացման ֆինանսավորում» ծրագրով նախատեսված միջոցներով Վանաձորի տարածքային բաժնի պահպանում:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է համայնքում ստեղծված սպասարկման կենտրոնի կողմից կազմակերպել քաղաքացիական կացության ակտերի գրանցման հետ կապված գործառույթները:

2026-2028թթ. համար նախատեսվում է 5997.0 հազ. դրամ:

Նախատեսվող գումարների հաշվարկները կատարելիս հաշվի են առնվել տվյալ ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված նորմերի պահանջները:

3. Ծրագրի անվանումը՝ **«Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ»**
(Ծրագրի դասիչը՝ Բաժին 01, խումբ 3, դաս 3)

Ծրագրի իրականացման նպատակն է մշտապես մաքուր պահել համայնքի փողոցները, մայթերը, բակային տարածքները, հուշարձանների և այլ ինժեներական

կառույցների հարակից տարածքները՝ պահպանելով ընդունված սանիտարահիգիենիկ պահանջները, համայնքի կանաչ տարածքների խնամք և նոր կանաչապատ տարածքների ստեղծում: Քաղաքի բնակիչների և հյուրերի համար ստեղծել առավել բարենպաստ և գրավիչ հանգստի վայրեր: Աջակցել համայնքի տարածքում գործող համատիրություններին բազմաբնակարան շենքերի տանիքների և շքամուտքերի բարեկարգման աշխատանքներում:

«Աջակցություն համատիրություններին» ծրագրի միջոցով կիրականացվեն համայնքի տարածքում գործող համատիրություններին պատկանող բազմաբնակարան շենքերի տանիքների, վերելակների և շքամուտքերի բարեկարգման աշխատանքները:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է ունենալ մաքուր գրավիչ և սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան տարածքներ, որոնք կօգտագործվեն համայնքի բնակիչների և այցելուների կողմից, ստեղծվել առավել բարենպաստ պայմաններ բնակիչների հանգստի և ժամանցի համար, ապահովել օդի մաքրությունը, կանաչապատ տարածքներով միջավայրը կունենա ավելի գրավիչ տեսք:

2026 թվականի համար նախատեսվում է 552864.8 հազ. դրամ, 2027 թվականի համար՝ 557768.8 հազ. դրամ, 2028 թվականի համար՝ 562918.2 հազ. դրամ:

Ծրագրի աշխատանքները իրականացվելու են համայնքի կողմից հիմնադրված «Հաշվապահ», «Նեցուկ ՀԶ» և «Վանաձորի քաղաքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կամակերպությունների միջոցով: «Հաշվապահ» ՀՈԱԿ-ի միջոցով կիրականացվեն համայնքից սուբսիդավորվող թվով 57 համայնքային ոչ առևտրային կամակերպությունների հաշվապահական գործընթացը: «Նեցուկ ՀԶ» ՀՈԱԿ-ի միջոցով կիրականացվեն կանաչ տարածքների խնամքն ու նոր կանաչապատ տարածքների ստեղծումը և ընդհանուր օգտագործման հանրային տարածքների բարեկարգման աշխատանքները: «Վանաձորի քաղաքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի միջոցով կիրականացվեն փողոցների, մայթերի, բակային տարածքների աղբահանության, սանիտարական մաքրման և բարեկարգման աշխատանքները: Գործընթացները կազմակերպվելու են հիմնարկին պատկանող 6 աղբատար մեքենաների և այլ հատուկ տեխնիկաների (էսկավատոր, բարձիչ, մաքրող-հավաքող մեքենա) և սուբվենցիոն ծրագրով նոր գնվելիք հատուկ տեխնիկաների միջոցով:

4. Ծրագրի անվանումը՝ **«Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)»**

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 01, խումբ 6, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է «Գուգարք բնակավայրի շիրմատուն» բյուջետային հիմնարկի միջոցով իրականացնել բնակավայրի շիրմատան հետ կապված ծառայությունները:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է ծրագրի բնագավառում որակյալ ծառայությունների մատուցում:

2026-2028թթ. համար նախատեսվում է 13896.0 հազ. դրամ:

Ծախսերը հաշվարկելիս հաշվի են առնվել նախորդ տարիների ընթացքում կատարված փաստացի ծախսերը, հիմք է ընդունվել ավագանու կողմից հաստատված բյուջետային հիմնարկի հաստիքացուցակը:

5. Ծրագրի անվանումը՝ **«Գյուղատնտեսություն»**
(Ծրագրի դասիչը՝ Բաժին 04, խումբ 2, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է համայնքում անասնաբուժական ծառայությունների մատուցում:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է համայնքում ապահովել և պատշաճ ձևով իրականացնել անասնաբուժական ծառայությունները:

2026-2028թթ. համար նախատեսվում է 2736.0 հազ. դրամ:

6. Ծրագրի անվանումը՝ **«ճանապարհային տրանսպորտ»**
(Ծրագրի դասիչը՝ Բաժին 04, խումբ 5, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է հիմնովին կամ մասնակի վերանորոգել փողոցների, մայթերի և բակային տարածքների քանդված ասֆալտբետոնե ծածկը (ասֆալտապատում և խճապատում): Փողոցների նշագծման, ճանապարհային նշանների տեղադրման միջոցով ճանապարհային երթևեկությունը դարձնել անվտանգ ուղևորների, հետիոտնի և տրանսպորտային միջոցների շահագործման համար:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է քաղաքի փողոցները, մայթերը և բակային տարածքները դարձնել առավել բարեկարգ, ապահովել տրանսպորտային միջոցների անվտանգ երթևեկությունը:

2026թ. համար նախատեսվում է 2220143.4 հազ. դրամ, 2027թ. համար՝ 1320000.0 հազ. դրամ, 2028թ. համար՝ 1066000.0 հազ. դրամ:

Տրանսպորտային միջոցների և բնակիչների անվտանգ երթևեկության կազմակերպման համար անհրաժեշտ է տեղադրել ճանապարհային երթևեկության նշաններ և նշագծել փողոցները: Իրականացնել փողոցների, մայթերի, կանգառների, կամուրջների և հենապատերի հիմնանորոգման աշխատանքներ, խճապատել որոշ երկրորդական փողոցներ: Փողոցներում կատարել նախնական փոսալցման աշխատանքներ, որը հնարավորություն կընձեռնի մինչև հիմնական փողոցաշինական աշխատանքների սկսելը ապահովել քաղաքային տրանսպորտի անվտանգ երթևեկությունը:

2026 թվականին կառավարության հետ համատեղ սուբվենցիոն ծրագրերով նախատեսվում է կապիտալ վերանորոգել համայնքի Մյանիկյան, Բանակի, Շիրակացու, Տարոն 1,3 և 4 փողոցները, ինչպես նաև Գուգարք, Շահումյան և Դարպաս բնակավայրերի մի շարք փողոցներ: Սուբվենցիոն ծրագրերով նախատեսվում է նաև համայնքի կարիքների համար ձեռք բերել կոմունալ տեխնիկա և ներհամայնքային ավտոբուսներ: Ծրագրում ներառվել են նաև 2025 թվականին չիրականացված սուբվենցիոն ծրագրերը և իրականացման արդյունքում առաջացած պարտքերը:

7. Ծրագրի անվանումը՝ **«Զբոսաշրջություն»**
(Ծրագրի դասիչը՝ Բաժին 04, խումբ 7, դաս 3)

Ծրագրի իրականացման նպատակն է համայնքում զբոսաշրջության հետ կապված հարաբերությունների կարգավորում, գովազդային ծրագրերի կազմակերպում, գովազդող գրականության պատրաստում և տարածում:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է Համայնքում ստեղծել ինֆոկենտրոն, պատրաստել ,,Վանաձոր,, դեկոր և Վանաձոր քաղաքի մասին եռալեզու գիրք:

2026թ. համար նախատեսվում է 12000.0 հազ. դրամ, 2027թ. համար՝ 15000.0 հազ. դրամ, 2028թ. համար՝ 17000.0 հազ. դրամ:

8. Ծրագրի անվանումը՝ **«Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)»**
(Ծրագրի դասիչը՝ Բաժին 04, խումբ 9, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է համայնքի ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի դիմաց նախատեսել ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է համայնքի ոչ ֆինանսական ակտիվների իրացումով նախատեսված մուտքերի չափով իրականացնել բյուջեով նախատեսված կապիտալ ծախսերը :

2026թ. համար նախատեսվում է 1258945.9 հազ. դրամ, 2027թ. համար՝ 757986.0 հազ. դրամ, 2028թ. համար՝ 687400.0 հազ. դրամ:

9. Ծրագրի անվանումը՝ **«Աղբահանում»**
(Ծրագրի դասիչը՝ Բաժին 05, խումբ 1, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է մշտապես մաքուր պահել համայնքի փողոցները, մայթերը, բակային տարածքները, հուշարձանների և այլ ինժեներական կառույցների հարակից տարածքները:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է ունենալ մաքուր գրավիչ և սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան տարածքներ, ապահովելով խոշոր եզրաչափերի աղբի տեղափոխումը, Տարոն-4 թաղամասի աղբաթափման վայրի հարակից տարածքի հարթեցման և մաքրման աշխատանքները, իրականացնել աղբարկղերի և աղբախցերի ախտահանում, կուտակված աղբի հողածածկման աշխատանքներ, կառուցել ստորգետնյա աղբահոր և ձեռք բերել նոր աղբարկղներ:

2026թ. համար նախատեսվում է 149000.0 հազ. դրամ, 2027թ. համար՝ 134000.0 հազ. դրամ, 2028թ. համար՝ 129000.0 հազ. դրամ:

10. Ծրագրի անվանումը՝ **«Կեղտաջրերի հեռացում»**
(Ծրագրի դասիչը՝ Բաժին 05, խումբ 2, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է բարելավել անձրևաջրատար համակարգը, պատշաճ կազմակերպել ջրահեռացումը:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է անձրևաջրատար ընդունիչ դիտահորերի սպասարկում, անձրևաջրատար ընդունիչ դիտահորերի և կափարիչների նորոգում, անձրևաջրատար համակարգի կառուցում, կոյուղագծերի վերանորոգման աշխատանքներ:

2026-2028թթ. համար նախատեսվում է 54000.0 հազ. դրամ:

11. Ծրագրի անվանումը՝ **«Շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքար»**
(Ծրագրի դասիչը՝ Բաժին 05, խումբ 3, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է համայնքի վարչական տարածքում ունենալ հոսող գետերի և մերձակա տարածքների պատշաճ սանիտարահիգիենիկ վիճակ:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է համայնքում գարնանային վարարումների ժամանակ նվազեցնել գետերի վրայով անցնող հետիոտնային կամուրջների փլուզման հավանականությունը:

2026-2028թթ. համար նախատեսվում է 10000.0 հազ. դրամ:

12. Ծրագրի անվանումը՝ **«Կենսաբազմազանության և բնության պաշտպանություն»**
(Ծրագրի դասիչը՝ Բաժին 05, խումբ 4, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է՝

1.Վանաձոր համայնքի տարածքում տարեցտարի ավելացող թափառող կենդանիների դեմ պայքարի իրականացում բնակչության համար առավել անվտանգ պայմաններ ապահովելու համար:

2.Վանաձոր համայնքի կողմից հարազատ չունեցող անձանց հուղարկավորության և գերեզմանատների սպասարկման աշխատանքների իրականացում:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է թափառող կենդանիների վնասազերծման (ստերիլիզացիա) միջոցով լուծել հանրային առողջությանն ու անվտանգությանը սպառնացող հիմնախնդիրը:

Հարազատ չունեցող անձանց հուղարկավորության և գերեզմանատների սպասարկման աշխատանքները կիրականացվեն «Վանաձորի սպասարկում» ՀՈԱԿ-ի միջոցով:

2026թ. համար նախատեսվում է 27300.0 հազ. դրամ, 2027թ. համար՝ 27500.0 հազ. դրամ, 2028թ. համար՝ 28200.0 հազ. դրամ:

13. Ծրագրի անվանումը՝ **«Բնակարանային շինարարություն»**
(Ծրագրի դասիչը՝ Բաժին 06, խումբ 1, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է համայնքի բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի իրականացում, հանրակացարանների ընթացիկ նորոգումը, բազմաբնակարան շենքերի վերելակների և տանիքների նորոգումը:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է առավել բարեկարգ և շահագործման համար անվտանգ դարձնել բազմաբնակարան շենքերը, բնակչության բարեկեցության բարելավման համար հիմնանորոգել բազմաբնակարան շենքերի տանիքները և վերագործարկել բարձրահարկ շենքերի վերելակները:

2026թ. համար նախատեսվում է 53000.0 հազ. դրամ, 2027թ. համար՝ 51000.0 հազ. դրամ, 2028թ. համար՝ 50000.0 հազ. դրամ:

14. Ծրագրի անվանումը՝ **«Համայնքային զարգացում»**
(Ծրագրի դասիչը՝ Բաժին 06, խումբ 2, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է դոնոր կազմակերպությունների հետ համատեղ ծրագրերի միջոցով նպաստել համայնքային զարգացմանն ուղղված հիմնախնդիրների լուծմանը:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է համայնքի և կազմակերպությունների համատեղ աշխատանքի արդյունքում կիրականացվեն բնակչության առջև դրված մի շարք խնդիրներ:

2026թ. համար նախատեսվում է 100000.0 հազ. դրամ, 2027-2028թթ. համար՝ 120000.0 հազ. դրամ:

15. Ծրագրի անվանումը՝ **«Ջրամատակարարում»**
(Ծրագրի դասիչը՝ Բաժին 06, խումբ 3, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է շատրվանների նորոգում և սպասարկում, ցայտաղբյուրների համար փականների ձեռք բերում և տեղադրում:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է քաղաքի ճարտարապետական տեսքի բարեկարգում, արդիականացում, լուսային էֆեկտներով շատրվանների առկայությամբ հրապարակը կհանդիսանա տեսարժան վայր և կնպաստի զբոսաշրջիկների հոսքի ավելացմանը:Սուբվենցիոն ծրագրով 2026թ. համար նախատեսվում է Շահումյան համայնքի խմելու ջրի համակարգի կառուցում:

2026թ. համար նախատեսվում է 167000.0 հազ. դրամ, 2027-2028թթ. համար՝ 17000.0 հազ. դրամ:

16. Ծրագրի անվանումը՝ **«Փողոցների լուսավորում»**
(Ծրագրի դասիչը՝ Բաժին 06, խումբ 4, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է երեկոյան և գիշերային ժամերին համայնքի երթևեկելի և բակային տարածքների լուսավորում, շենքերի և կառույցների գեղարվեստական լուսավորության ապահովում:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է երեկոյան ժամերին առավել հարմարավետ և անվտանգ դարձնել փողոցային երթևեկությունը, ապահովել շինությունների և կառույցների գեղարվեստական լուսավորումն, առավել գրավիչ դարձնել դրանց տեսքը:

2026թ. համար նախատեսվում է 142335.0 հազ. դրամ, 2027թ. համար՝ 292335.0 հազ. դրամ, որից 150000.0 հազ. դրամը նպատակաուղղված է Վանաձոր համայնքի գլխավոր փողոցների լուսավորության համակարգի արդիականացմանը (սուբվենցիա), 2028թ. համար՝ 142335.0 հազ. դրամ:

Փողոցների լուսավորում ծրագրով նախատեսված ֆինանսական միջոցները ուղղվելու են փողոցային լուսավորության, լուսաֆորային օբյեկտների համակարգի էներգետիկ ծառայությունների սպառած էլեկտրաէներգիայի վարձի վճարմանը, փողոցային լուսավորության վերականգնմանը:

17. Ծրագրի անվանումը՝ **«Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ»**
(Ծրագրի դասիչը՝ Բաժին 06, խումբ 5, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է Համայնքի կարիքների համար իրականացվող քաղաքաշինական, շինարարական և հետազոտական աշխատանքների համար օրենքով սահմանված կարգով հետազոտությունների, փորձաքննությունների և նախագծանախահաշվային փաստաթղթերի ապահովում:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է Համայնքի կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերով հիմնավորված քաղաքաշինական ծրագրերի իրականացում՝ սահմանված օրենսդրական նորմերին համապատասխան:

2026թ. համար նախատեսվում է 55000.0 հազ. դրամ, 2027թ. համար՝ 57000.0 հազ. դրամ, 2028թ. համար՝ 60000.0 հազ. դրամ:

18. Ծրագրի անվանումը՝ **«Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)»**
(Ծրագրի դասիչը՝ Բաժին 06, խումբ 6, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է ստեղծել բարեկարգ հասարակական նշանակության տարածքներ, բակային տարածքներ հանգստի և ժամանցի համար, խաղահրապարակներ երեխաների համար:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է բակերը բերել բարեկարգ տեսքի, բարելավել բնակիչների հանգստի կազմակերպումը, ստեղծել հաճելի պայմաններ երեխաների ժամանցի և խաղերի համար: Ծրագրի համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցները կուղղվեն բազմաբնակարան շենքերի բակերում և մերձբակային տարածքներում խաղահրապարակների կառուցմանը, ինքնակամ կառույցների ապամոնտաժման և քանդման աշխատանքների կազմակերպմանը և բակերի կապիտալ նորոգմանը:

2026թ. համար նախատեսվում է 461480.0 հազ. դրամ, 2027թ. համար՝ 259480.0 հազ. դրամ, 2028թ. համար՝ 182000.0 հազ. դրամ:

19. Ծրագրի անմանումը՝ **«Հանգստի և սպորտի ծառայություններ»**

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 08, խումբ 1, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է համայնքում սպորտային միջոցառումների միջոցով զարգացնել ֆիզիկական դաստիարակությունը, հայտնաբերել և մեծ սպորտ ուղղորդել տաղանդավոր երեխաներին: Ստեղծել համայնքի մարզիկների պարապմունքների համար պայմաններ, ապահովել նրանց մասնակցությունը հանրապետական և միջազգային նշանակության միջոցառումներին, որոնք նպատակաուղղված են հանրապետության լավագույն մարզիկների բացահայտմանը:

Ստեղծել բարեկարգ հասարակական նշանակության տարածքներ հանգստի և ժամանցի համար: Բարեկարգ այգիներում և պուրակներում մարդկանց հանգստի և ժամանցի նպատակով ձեռք բերել և տեղադրել նստարաններ և զրուցարաններ:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է պատանիների և երիտասարդության շրջանում մասսայական դարձնել սպորտը ու առողջ ապրելակերպը, նպաստել առողջ հասարակություն ունենալու գործին: Մարզական դաստիարակչական ծրագրերի իրականացում մարզադպրոցներում: Բարելավել բնակիչների հանգստի կազմակերպումը, ստեղծել հաճելի պայմաններ երեխաների ժամանցի և խաղերի համար: Նստարանների և զրուցարանների տեղադրմամբ առավել կազմակերպված դարձնել մարդկանց հանգիստն ու ժամանցը:

2026թ. համար նախատեսվում է 14000.0 հազ. դրամ, 2027թ. համար՝ 37700.0 հազ. դրամ, 2028թ. համար՝ 15500.0 հազ. դրամ:

20. Ծրագրի անկանումը՝ ***«Գրադարաններ»***

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 08, խումբ 2, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է համայնքի գրադարանների պահպանման միջոցով բնակչության բոլոր խավերին ապահովել գեղարվեստական, մասնագիտական և տեխնիկական գրականությամբ: Գեղագիտական դաստիարակության ապահովում, կրթական համակարգի գործունեության օժանդակում:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է ավելացնել գրադարանային ծառայություններից օգտվողների թիվը՝ բարձրացնելով սպասարկման որակը, թարմացնել և արդիականացնել գրադարանային ֆոնդը:

2026թ. համար նախատեսվում է 46813.4.0 հազ. դրամ, 2027թ. համար՝ 49054.3 հազ. դրամ, 2028թ.համար՝ 51039.7 հազ. դրամ:

21. Ծրագրի անվանումը՝ **«Թանգարաններ և ցուցասրահներ»**

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 08, խումբ 2, դաս 2)

Ծրագրի իրականացման նպատակն է համայնքի բնակչության բոլոր խավերին, համայնք այցելած զբոսաշրջիկներին և հյուրերին պատմամշակութային և գրական ժառանգության հետ ծանոթացում:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է ավելացնել համայնք այցելած զբոսաշրջիկների և հյուրերի թիվը, դրա արդյունքում համայնքը դարձնել ավելի գրավիչ և ճանաչված արտերկրում: Ոլորտն ունի թվով 2 թանգարան: Նախատեսված սուբսիդիայի գումարները ներառում են կազմակերպությունների աշխատողների աշխատավարձերը և պահպանման ծախսերը:

2026թ. համար նախատեսվում է 69374.3 հազ. դրամ, 2027թ. համար՝ 72843.0 հազ. դրամ, 2028թ.համար՝ 76485.0 հազ. դրամ:

22. Ծրագրի անվանումը՝ ***«Մշակույթի տներ»***

(Ծրագրի դասիչը՝ Բաժին 08, խումբ 2, դաս 3)

Ծրագրի իրականացման նպատակն է համայնքում դպրոցականների շրջանում զարգացնել մշակութային դաստիարակությունը՝ գեղագիտական, ազգային հոգևոր մշակույթի ուսուցման, տաղանդավոր երեխաների հայտնաբերման համար:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է դպրոցականների և բարձր տարիքի երիտասարդների շրջանում մշակութային ստեղծագործական ունակությունների զարգացում, հոգևոր, գեղագիտական դաստիարակության ապահովում: Ոլորտն ունի թվով 2 թանգարան: Նախատեսված սուբսիդիայի գումարները ներառում են կազմակերպությունների աշխատողների աշխատավարձերը և պահպանման ծախսերը: Ոլորտն ունի թվով 6 մշակույթի տներ: Նախատեսված սուբսիդիայի գումարները ներառում են կազմակերպությունների աշխատողների աշխատավարձերը և պահպանման ծախսերը:

2026թ. համար նախատեսվում է 108980.5 հազ. դրամ, 2027թ. համար՝ 113778.5 հազ. դրամ, 2028թ.համար՝ 118806.8 հազ. դրամ:

23. Ծրագրի անվանումը՝ ***«Այլ մշակութային կազմակերպություններ»***
(Ծրագրի դասիչը՝ Բաժին 08, խումբ 2, դաս 4)

Ծրագրի իրականացման նպատակն է համայնքում զարգացնել երաժշտական, մշակութային դաստիարակությունը՝ ազգային հոգևոր մշակույթի ուսուցման, տաղանդավոր երեխաների հայտնաբերման համար:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է երիտասարդների շրջանում մշակութային ստեղծագործական ունակությունների զարգացում, հոգևոր, գեղագիտական դաստիարակության ապահովում, կրթամշակութային, դաստիարակչական ծրագրերի իրականացում: Ոլորտի ծախսերը նախատեսվել են թվով 7 մշակութային հիմնարկների համար, որոնց ենթակայությամբ գործում են մեկ տիկնիկային թատրոն, կամերային երգչախումբը և նվագախումբը, կամերային և երգի թատրոնները և ,,Հորովել,, ժողովրդական երգի-պարի համույթը:Պահպանման ծախսերի համար հատկացված միջոցները կուղղվեն կազմակերպությունների ընթացիկ նորոգմանը, գույքի ձեռք բերմանը, և այլ անհրաժեշտ ծախսերի ֆինանսավորմանը:

2026թ. համար նախատեսվում է 248103.2 հազ. դրամ, 2027թ. համար՝ 253134.0 հազ. դրամ, 2028թ.համար՝ 258787.3 հազ. դրամ:

24. Ծրագրի անվանումը՝ **«Հրատարակչություններ, խմբագրություններ»**
(Ծրագրի դասիչը՝ Բաժին 08, խումբ 3, դաս 2)

Ծրագրի իրականացման նպատակն է Աջակցել հրատարակչական և հեռարձակման գործունեությամբ զբաղվող կազմակերպություններին:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է Նպաստել թերթերի, ամսագրերի տպագրման և հեռուստատեսային հաղորդումների պատրաստման գործընթացին:

2026-2028թթ. համար այս ուղղությամբ նախատեսվում է 2000.0 հազ. դրամ:

25. Ծրագրի անվանումը՝ **«Հասարակական այլ ծառայություններ»**
(Ծրագրի դասիչը՝ Բաժին 08, խումբ 4, դաս 0)

Ծրագրի իրականացման նպատակն է աջակցել տարբեր ոլորտներում գործող հասարակության կազմակերպությունների կարողությունների զարգացմանը և երիտասարդական ծրագրերի իրականացմանը:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է ունենալ ավելի հզոր հասարակական կառույցներ, որոնց գործունեությունը ուղղված կլինի երիտասարդների և հասարակության կայացմանը և դերի բարձրացմանը:

2026թ. համար նախատեսվում է 13800.0 հազ. դրամ, 2027թ. համար՝ 14300.0 հազ. դրամ, 2028թ.համար՝ 15200.0 հազ. դրամ:

26. Ծրագրի անվանումը՝ **«Մշակութային միջոցառումների իրականացում»**
(Ծրագրի դասիչը՝ Բաժին 08, խումբ 6, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է համայնքի բնակիչներին, հատկապես երիտասարդությանը մասնակից դարձնել մշակութային կյանքին:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է համայնքային մշակութային միջոցառումների և տոնակատարությունների կազմակերպում, որոնց արդյունքում ժողովրդին, հատկապես երիտասարդությանը և համայնքի հյուրերին կմատուցվեն բարձրաճաշակ մշակութային ծառայություններ: Կախված միջոցառումների մասշտաբներից և նշանակությունից համայնքի ավագանու հաստատմանը կներկայացվեն միջոցառումների անցկացման ծախսերի նախահաշիվները: Բյուջեով հաստատված մյուս միջոցառումների անցկացումը կիրականացվի համայնքի ղեկավարի կողմից հաստատված նախահաշիվների հիման վրա:

2026-2028թթ. համար այս ուղղությամբ նախատեսվում է 55000.0 հազ. դրամ:

27. Ծրագրի անվանումը՝ **«Նախադպրոցական կրթություն»**
(Ծրագրի դասիչը՝ Բաժին 09, խումբ 1, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է համայնքի 2-6 տարեկան երեխաների ցերեկային խնամք մանկապարտեզներում՝ ապահովելով նրանց ֆիզիկական, մտավոր և հոգևոր զարգացումը, առողջության ամրապնդումը, ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, ինչպես նաև տարրական դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է համայնքի 2-6 տարեկան երեխաների ընդգրկում համայնքում գործող մանկապարտեզներում, երեխա-հաճախումների թվի ավելացում, նախադպրոցական կրթական ծրագրերի իրականացման շրջանակներում երեխաների ընդհանուր զարգացման ապահովում:Ոլորտի համայնքային կազմակերպությունները թվով 23-ն են: Մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը կազմում է շուրջ 2250 երեխա: Նախատեսված սուբսիդիայի գումարը ներառում է կազմակերպությունների աշխատողների աշխատավարձը, ինչպես նաև զբաղեցրած տարածքի կոմունալ վարձերի և այլ ծառայությունների վճարման, ընթացիկ նորոգման, գույքի ձեռք բերման և մանկապարտեզ հաճախող երեխաների սննդի ծախսերը: Համայնքի ղեկավարի կողմից ներկայացված մանկապարտեզներում ներառված կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ ուսուցման վերաբերյալ, ինչպես նաև զինծառայող ծնողի ռազմական գործողություններին մասնակցած կամ զոհված զինծառայողի երեխաների վերաբերյալ հայտերին համապատասխան ՀՈԱԿ-ներում կնդգրկվեն պետության կողմից համայնքին ընթացիկ դրամաշնորհների հատկացման գումարները:Սուբվենցիոն ծրագրով նախատեսված է իրականացնել համայնքի մի շարք մանկապարտեզների շենքերի կառուցումը:

2026թ. համար այս ուղղությամբ նախատեսվում է 973292.0 հազ. դրամ, 2027թ. համար՝ 1020513.0 հազ. դրամ և 2028թ. համար՝ 1064792.0 հազ. դրամ:

28. Ծրագրի անվանումը՝ **«Արտադպրոցական դաստիարակություն»**
(Ծրագրի դասիչը՝ Բաժին 09, խումբ 5, դաս 1)

Ծրագրի իրականացման նպատակն է համայնքային ենթակայության թվով 7 երաժշտական դպրոցների և 11 մարզադպրոցների պահպանման միջոցով կազմակերպել համայնքի երաժշտական և սպորտային կյանքը, մինչև 15 տարեկան դեռահասների շրջանում զարգացնել երաժշտական ունակությունները և ֆիզիկական դաստիարակությունը, հայտնաբերել և մեծ սպորտ ուղղորդել տաղանդավոր երեխաներին: Ստեղծել համայնքի մարզիկների պարապմունքների համար պայմաններ, ապահովել նրանց մասնակցությունը հանրապետական և միջազգային նշանակության միջոցառումներին, որոնք նպատակաուղղված են հանրապետության լավագույն մարզիկների բացահայտմանը:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է պատանիների և երիտասարդության շրջանում մասսայական դարձնել սպորտը ու առողջ ապրելակերպը, նպաստել առողջ հասարակություն ունենալու գործին: Մինչև 15 տարեկան սովորողների և բարձր տարիքի երիտասարդների շրջանում երաժշտական և ֆիզիկական դաստիարակության ապահովում: Երաժշտական և մարզական դաստիարակչական ծրագրերի իրականացում երաժշտական դպրոցներում և մարզադպրոցներում: Նախատեսվում է պահպանել համայնքային ենթակայության թվով 18 արտադպրոցական հիմնարկները, կազմակերպել արտադպրոցական կրթական գործընթաց շուրջ 225 խմբակներում: Կոմունալ ծախսերը ևս ներառված են պահպանման ծախսերում:

Տարբեր մարզաձևերից հանրապետությունում անցկացվող հանրապետական, միջազգային մարզական խաղերի, առաջնությունների, մրցաշարերի մասնակցության համար նախատեսվում է գործուղել քաղաքի մարզիկներին: Մրցաշարերում տարբեր մարզաձևերից առավել բարձր արդյունք ցույց տված մարզիկներին նախատեսվում է վճարել սպորտային նպաստներ: Գումար է նախատեսվել նաև տարվա ընթացքում առավել ակնառու հաջողություններ ունեցած մարզիկներին խրախուսելու համար միանվագ նպաստներ վճարման համար:

2026թ.համար այս ուղղությամբ նախատեսվում է 989327.9 հազ. դրամ, 2027թ. համար՝ 1208684.5 հազ. դրամ և 2028թ. համար՝ 1202650.1 հազ. դրամ:

29. Ծրագրի անվանումը՝ **«Համայնքների պահուստային ֆոնդ»**
(Ծրագրի դասիչը՝ Բաժին 11, խումբ 1, դաս 2)

2026-2028 թվականների համար բյուջեի վարչական մասում ձևավորվել է պահուստային ֆոնդ, որը նպատակաուղղված է տվյալ բյուջետային տարում չնախատեսված պարտավորությունների կատարմանը:

Պաշտոնական դրամաշնորհներ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքին համապատասխան համայնքների բյուջեների վարչական մասի եկամուտների կազմում կարող են նախատեսվել պետական բյուջեից ստացվող պաշտոնական դրամաշնորհները՝ պետական բյուջեից հատկացվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարները կհաշվարկվեն լիազորված պետական մարմնի կողմից՝ «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով սահմանված սկզբունքներին համապատասխան:

Սուբվենցիաներ

Պետական բյուջեից համայնքին կտրամադրվեն նաև նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) կապիտալ ծախսերի համար:

Սուբվենցիաները համայնքի կողմից իրականացվող առանձին նպատակային ծախսատեսակների (ծրագրերի) կատարման համար անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներն են: Հիշյալ գումարների հատկացումները իրականացվելու են Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային միջոցների հաշվին առանձին որոշումներով, որից հետո համայնքի հետ կկնքվի համապատասխան պայմանագիր:

Ստորև աղյուսակի տեսքով ներկայացվում է տեղեկատվություն Վանաձոր համայնքի 2026-2028 թվականների սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ:

2026-2028 թվականների կապիտալ ծախսերի մեջ ընդգրկվել է հետևյալ սուբվենցիոն ծրագրերը՝

հազար դրամ

N	Ոլորտ	2026	2027	2028
	Մասնակցային բյուջետավորում	20 000,0	20 000,0	30000,0
	Սուբվենցիոն ծրագրեր			
1	Վանաձոր համայնքի Դարպաս բնակավայրի գլխավոր ճանապարհի հիմնանորոգում	157 950,0		
2	Վանաձոր համայնքի Շահումյան բնակավայրի մի շարք փողոցների հիմնանորոգում	189 540,0		

3	Վանաձոր համայնքի Մյասնիկյան փողոցի հիմնանորոգում	979 290,0		
4	Բանակի փողոց հիմնանորոգում	332 713,4		
5	Տարոն-4 թաղամասի գլխավոր փողոցի հիմնանորոգում	505 000,0	520 000,0	
6	Շիրակացի փողոցի հիմնանորոգում	263 250,0		
7	Վանաձոր համայնքի թվով 3 սպորտդպրոցների հիմնանորոգում	135 126, 6		
8	Շահումյան բնակավայրում մանկապարտեզի կառուցում	233 756,2		
9	Գուգարքի մի շարք փողոցներ հիմնանորոգում	115 830,0		
10	Համայնքի մի շարք բակերի բարեկարգում և խաղահրապարակների կառուցում	676 480,0	676 480,0	500 000,0
11	Գուգարք համայնքում լուսավորության արդիականացում		150 000,0	
12	Դարպաս համայնքում խաղահրապարակի, մինի ֆուտբոլի դաշտի կառուցում		20 000,0	
13	Տարոն-1 թաղամասի փողոցների բարեկարգում		89 000,0	
14	Տարոն-3 թաղամասի փողոցների բարեկարգում		76 000,0	
15	Շահումյան համայնքի խմելու ջրի համակարգի կառուցում		150 000,0	
16	Վանաձոր համայնքի մի շարք երկրորդային փողոցների բարեկարգում		450 000,0	560 000,0
17	Համայնքի մարզադպրոցների հիմնանորոգում, նոր գույքի ձեռք բերում		250 000,0	
18	Արվեստի դպրոցների դահլիճների բարեկագում, տեխնիկայի ձեռք բերում		70 000,0	
19	Շ. Ազնավուրի մշակույթի պալատի մասնակի նորոգում			280 000,0

Ծավալվեց քննարկում, բարձրացվեցին հարցեր, որոնց տրվեցին սպառիչ պատասխաններ:

«Մամիկոն Ասլանյան» դաշինքի ավագանու անդամ Սեյրան Ղամաբարյան – Եվրոպական համալսարանի դիմացի հողը հոսում է և լցվում է գետը, անհրաժեշտություն կա հենապատի, այդ աշխատատանքները կատարելու համար անհրաժեշտ է բավականին մեծ գումար:

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Հայկ Վիրաբյան - այս գործընթացը պետք է կազմակերպել համայնքային բյուջեով ոչ թե սուբվենցիոն ծրագրերով: Առաջարկեց հաջորդ տարվա բյուջեի պլանավորման ընթացքում նախատեսել համապատասխան տող հենապատի կառուցման համար:

Որպես հիշեցում Հ.Վիրաբյանը հավելեց, որ համաձայն Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատարի որոշման յուրաքանչյուր բաժին զեկուցագրով ներկայացնի 2026 թ.-ի պլանավորած ծախսերը: Նաև նշեց, որ առաջիկայում յուրաքանչյուր սուբվենցիոն ծրագրի համար կլինեն հայտարարություններ և կանցկացվեն հանրային լսումներ:

Հանրային քննարկումն ավարտվեց ժամը 11:30-ին:

Հանրային քննարկմանը մասնակցում էին՝
Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հայկ Վիրաբյանը, Վանաձոր համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար Աստղիկ Ավետիքյանը, Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր, տեղակալներ և բաժինների աշխատակիցներ, ավագանու անդամներ և ՀԼՄ-ների ներկայացուցիչներ:

Նախաձեռնող՝
Վանաձոր համայնքի ղեկավարի
պաշտոնակատար

Ա.Փելեշյան

Վանաձորի համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղար՝

Հ.Վիրաբյան

Նիստը վարող՝

Վ.Գրիգորյան